նմանութիւն էր բերում արածող անասունների նախիրին: Այդ տեսարանը խիստ ուրախութիւն պատճառեց ինձ, ես մտածում էի՝ եթէ նրանք հոտեր են, ուրեմն, կ'ունենան իրանց մօտ եւ հովիւներ, որոնք ցոյց կը տան ինձ ճանապարհը գոնեայ ետ դառնալ Կ. գիւղը: Այս նպատակով ես սկսեցի վայր իջնել դէպի տափարակը, եւ բաւականին յառաջ գնալով, նկատեցի, որ իմ երեւակայութիւնը խաբել էր ինձ, շարժուն կէտերն անասուններ չէին. այլ թուփեր, որոնք տեղ-տեղ ծածկում էին անապատի անհարթ երեսը, որը հեռոից երեւում էր որպէս տափարակ:

Այժմ ի՞նչ պէտք էր անել: Ես բոլորովին ընկայ յուսահատութեան մէջ: Ես երկիւղ չունէի, որ գիշերը բացօթեայ կը մնամ լեռների մէջ, ես երկիւղ չունէի ոչ ցրտից եւ ոչ գազաններից: Ես միայն ամօթ էի կրում, իմ հպարտութիւնը տանջում էր ինձ: Ես ամօթ էի կրում Մարօից, որ այնպէս յիմարաբար վարոեցայ նրա ուղեցուցութեան հետ: Ես ամօթ էի կրում ընկերներիցս, որոնք առաջին քայլից կը նկատէին իմ թուլութիւնները եւ իմ անընդունակութիւնը...

Յանկարծ լսելի եղաւ մի խուլ որոտմունք, որի արձագանքը կրկնոեցաւ հեռաւոր լեռների մէջ, նրան հետեւեց երկրորդը եւ երրորդը: Այժմ պարզ որոշեցի, թէ հրացանի ձայներ էին: Բայց ովքե՞ր էին նետողները: Ընկերներս չէին կարող լինել, որովհետեւ իմ գտնոած տեղը շատ հեռու էր Խանա-սորի ձորից: Ուրեմն, մտածում էի ես, կամ ուրիշ որսորդներ պէտք է լինեն, կամ աւազակներ, որոնք թալանում էին ոչխարների հոտեր: Բայց ինձ համար միեւնոյն էր, ովքեր լինէին, ես միայն ուրախ էի, որ կը հանդիպեմ մարդիկների:

Ես սկսեցի դիմել դէպի այն կողմը, ուր կից լսելի եղան ձայները, որքան մօտենում էի, այնքան պարզ լսելի էր լինում շների խառնաձայն աղաղակը: Այժմ անտարակոյս էի, որ կը հանդիպեմ որսորդների: Բայց մինչեւ նրանց մօտ հասնելը, պէտք էր անցնել մէկ բլուրի վրայով: Դեռ նրա բարձրութեան կէսին չհասած, որոտաց մի կռնչիւն, եւ ես տեսայ՝ ինձանից քսան քայլ հեռու վազում էր ահագին ղաբան (վարազ): Հրացանս ուսիցս վեր բերելը եւ նրան արձակելը երկու վայրկեանի գործ եղաւ: Գնդակը թէեւ դիպաւ իւր նպատակին, բայց հարոածը մահաբեր չեղաւ. նա անցաւ դարանի աջ ոտքի ազդրից: Հրէշաւոր կենդանին, ամենեւին չզգալով իւր վէրքի ցաւը, դարձաւ դէպի ինձ: Յարձակմունքը այնքան շուտափոյթ եղաւ, որ նա ամենեւին միջոց չտոեց կրկին լցնել հրացանը: Ճգնաժամը վճռական էր: Կատաղի գազանը, բարկացած, հրաբորբոք աչքերով արդէն մօտեցել էր ինձ...: Ես մի կողմ ձգեցի հրացանը եւ պատրոնը, որ ձեռքիս ունէի, իմ պաշտպանութեան միակ զէնքը